ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2018-2020թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-նոյեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 92.8%, 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.4%, իսկ 2018թ. հունվար-նոյեմբերին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.6%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1,832,103.1 մլն.դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 23,983.9 մլն. դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 268,704.6 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 322,435.5 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 22,340.7 և 13,310.5 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 2,517,727.4 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 345,571.9 և 52,866.4 մլն դրամով: Ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1,548,744.0 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 298,820.8 և 34,528.4 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 99.8%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.3%-ի և 104.1%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերին նկատմամբ կազմել է 88.8%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.5%-ի և 105.5%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 86.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 109.2%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 86.4%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 114.8%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 363,159.6 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 39,701.4 և 89,712.8 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1,217,602.8 մլն. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 63,709.7 մլն դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 185,644.5 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 231,569.6 մլն. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3,370.4 մլն դրամով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 2,840.0 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 19,771.1 մլն.դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 3,346.0 և 3,812.7 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 112.7%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 123.9%-ի և 85.7%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 96.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.2%-ի և 109.6%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 100.4%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.1%-ի և 106.9%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 85.6%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 97.9%-ի և 97.3%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-նոյեմբերին կազմել է 325,681.6 մլն. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է 110,384.2 և 25,029.1 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-նոյեմբերին կազմել է 261,850.7 մլն.դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 18,772.5 և 25,029.1 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2020թ. հուվար-նոյեմբերին կազմել է 421,542.5 մլն. դրամ, ինչը 2019 և 2018 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 25,994.8 և 91,615.9 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 86.5%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 121.9%-ի և 134.0%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 107.2%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև 2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 110.4% և 104.9%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 107.0%, 2019 և 2018 թվականների, ինչպես նաև  2018 և 2017 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 116.3 5%-ի և 118.3%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 101.0%, 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.5%, 2018թ. հունվար-նոյեմբերին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.6%: ՍԳԻ-ն 2020թ. նոյեմբերին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 100.3%, 2019թ. նոյեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 99.5%, 2018թ.նոյեմբերին 2017թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 100.3%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2020թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 845,043.0 մլն դրամ, ինչը 14,138.0 մլն. դրամով կամ 1.7%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 234,979.0 մլն. դրամով կամ 38.5%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2020թ. նոյեմբերի դրությամբ կազմել է 88362 մարդ, ինչը 3613 մարդով կամ 4.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6515 մարդով կամ 7.96%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2020թ. նոյեմբերի դրությամբ կազմել է 60838 մարդ, ինչը 1248 մարդով կամ 2.01%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4528 մարդով կամ 6.93%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

## ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




## ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




## Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




## Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 6,356.0 մլն. դոլար, ինչը 898.1 մլն. դոլարով կամ 12.4%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 378.5 մլն. դոլարով կամ 5.6%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է -1,788.0 մլն. դոլար, ինչը 645.5 մլն. դոլարով կամ 26.5%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 538.6 մլն. դոլարով կամ 23.2%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 2,284.0 մլն դոլար, ինչը 126.3 մլն. դոլարով կամ 5.2%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 80.1 մլն. դոլարով կամ 3.6%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2020թ. հունվար-նոյեմբերին կազմել է 4,072.0 մլն դոլար, ինչը 771.8 մլն. դոլարով կամ 15.9%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 458.5 մլն. դոլարով կամ 10.1%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2020 թ. հունվար-նոյեմբերին կազմել է 186167 դրամ, ինչը 7282 դրամով կամ 4.1%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 17368 դրամով կամ 10.3%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2020թ. հունվար-նոյեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -242,709.0 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 274,002.9 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -31,293.9 մլն. դրամ: 2019թ. հունվար-նոյեմբերին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 40,154.1 դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -3,239.4 և -36,914.7 մլն դրամ: 2018թ. հունվար-նոյեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -51,480.2 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 83,667.3 և -32,187.1 մլն. դրամ: